# ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ՝ ՍՈՒՐԲ ԵՐԿՐՈՒՄ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ

Ապրիլի 12-ին, երեկոյան, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցած «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանի շնորհանդեսից հետո, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, Մայր Տաճարի Իջման Ս. Սեղանի առջև տեղի ունեցավ միասնական աղոթք՝ աշխարհում և մասնավորաբար Սուրբ Երկրում խաղաղության և հաշտության հաստատման համար:

Մայր Աթոռի միաբան Հայրերը և բազմաթիվ ներկաներ Վեհափառ Հայրապետի հետ մեկտեղ աղոթք բարձրացրեցին առ Աստված՝ հայցելով, որ ամենողորմ Տերը ապահով ու անվտանգ պահի Սուրբ Երկիրը և Երուսաղեմի Հայոց Պատրիարքությանը իր միաբանությամբ հանդերձ՝ խաղաղություն և շտապափույթ հաշտություն պարգևելով Տերունական վայրերում բնակվող ժողովուրդներին:

Վեհափառ Հայրապետը նաև տեղեկացրեց ներկաներին, որ օրերս Բեթղեհեմում վիրավորված ուրարակիր Արմեն Սինանյանի առողջական վիճակին այլևս վտանգ չի սպառնում և առաջիկա 10 օրերի ընթացքում նա դուրս կգա հիվանդանոցից:

Այսօր Վեհափառ Հայրապետն առանձին հանդիպում ունեցավ նաև Ա. Սինանյանի ծնողների հետ:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*